Building a Europe
for and with children

Construire une Europe
pour et avec les enfants

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Council of Europe recommendation on children's rights and social services friendly to children and families

Recommandation du Conseil de l'Europe sur les droits de l'enfant et les services sociaux adaptés aux enfants et aux familles

ARMENIAN LANGUAGE VERSION

Երեխաների իրավունքները և երեխաներին ու ընտանիքներին նպաստող սոցիալական ծառայությունները

Non-official translation
Traduction non-officielle

Երեխաների իրավունքները և երեխաներին ու ընտանիքներին նպաստող սոցիալական ծառայությունները

Հանձնարարական CM/Rec (2011)12

Բովանդակություն

Նախաբան
I. Ընդգրկումն ու նպատակը
II. Սահմանումները
III. Հիմնարար սկզբունքները

Ա. Երեխայի բարձրագույն շահերը պաշտպանող դրույթները
Բ. Երեխայի մասնակցության իրավունքները
Գ. Երեխայի պաշտպանության իրավունքները

IV. Երեխաներին նպաստող սոցիալական ծառայությունների գլխավոր տարրերը

Ա. Ընդհանուր սոցիալական ծառայություններ
Բ. Հատուկ սոցիալական ծառայություններ
Գ. Խորացված սոցիալական ծառայություններ

V. Երեխաներին նպաստող սոցիալական ծառայությունների մատուցման հիմնական ռազմավարությունները

Ա. Տեղեկատվություն և խորհրդատվություն
Բ. Ծառայությունների մատչելիություն
Գ. Հասանելիություն
Դ. Համապատասխանություն, պատշաճություն
Ե. Միջճյուղային և բազմամասնակցական համագործակցություն
Զ. Մասնագիտական հմտություն. վարժեցում, վերահսկում և պատասխանատվություն
Է. Երեխայի ապահովությունը
Ը. Գաղտնիության և մասնավոր կյանքի իրավունքներ
Թ. Բողոքարկման մեխանիզմներ և երեխային վնասող որոշումների վերանայում
Ժ. Որակական չափորոշիչներ, մշտադիտում և գնահատում

Նախարարների կոմիտեի CM/Rec (2011)12 Հանձնարարականը անդամ երկրներին՝ երեխաների իրավունքների և երեխաներին ու ընտանիքներին նպաստող սոցիալական ծառայությունների վերաբերյալ

(Ընդունված Նախարարների կոմիտեի կողմից 2011թ. նոյեմբերի 16-ին Նախարարների ներկայացուցիչների 1126-րդ նիստում)

Նախարարների կոմիտեն՝ Եվրոպայի խորհրդի Կանոնադրության 15.*բ* հոդվածի համաձայն՝

Հաշվի առնելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է հասնել առավելագույն միասնության անդամ երկրների միջև, ի միջի այլոց՝ նաև խթանելով ընդհանուր կանոնների ընդունումը,

Գիտակցելով, որ երեխան իրավունքներ ունեցող անձ է՝ ներառյալ պաշտպանվածության ու մասնակցության, իր տեսակետներն արտահայտելու, իրեն լսել տալու և ուշադրության առնվելու իրավունքը,

Նկատի ունենալով երեխաների իրավունքների վերաբերյալ իրավական տեքստերը և, մասնավորապես, Միավորված Ազգերի կոնվենցիան երեխայի իրավունքների մասին, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան (ETS № 5), որը պաշտպանում է յուրաքանչյուրի, այդ թվում երեխաների իրավունքները, Եվրոպական սոցիալական խարտիան (ETS № 35) և Եվրոպական սոցիալական (վերանայված) խարտիան (ETS № 163), Երեխաների իրավունքների իրականացման մասին եվրոպական կոնվենցիան (ETS № 160), Երեխաների հետ շփման մասին կոնվենցիան (ETS № 192), Երեխաների որդեգրության մասին եվրոպական (վերանայված) կոնվենցիան (CETS № 202), Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին Միավորված Ազգերի կոնվենցիան և Սեռական շահագործումից ու սեռական բռնություններից երեխաների պաշտպանության մասին կոնվենցիան (CETS № 201),

Հաշվի առնելով անդամ երկրներին Նախարարների կոմիտեի հետևյալ Հանձնարարականները՝ Rec(87)20՝ անչափահասների իրավախախտումների նկատմամբ հասարակական արձագանքի մասին, Rec(98)8՝ ընտանեկան և հասարակական կյանքին երեխաների մասնակցության մասին, Rec(2003)19՝ սոցիալական իրավունքների մատչելիության բարելավման մասին, Rec(2005)5՝ փակ հաստատություններում ապրող երեխաների իրավունքների մասին, Rec(2006)5՝ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և հանրային կյանքին լիակատար մասնակցության խթանմանն ուղղված՝ Եվրոպայի խորհրդի գործողությունների նախագծի մասին, Եվրոպայում 2006-2015 թթ. Հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի որակի բարելավման մասին, Rec(2006)19՝ դրական ծնող լինելուն սատարելու քաղաքականության մասին, CM/Rec(2009)10՝ երեխաներին բռնությունից պաշտպանելու միասնական ազգային ռազմավարությունների մասին, CM/Rec(2009)9՝ առուտիզմային խանգարումներ ունեցող երեխաների և երիտասարդների կրթության ու հանրային ներգրավման մասին, CM/Rec(2010)2՝ հաշմանդամություն ունեցող երեխաներին փակ հաստատություններից դուրս բերելու և համայնքով ապրելու մասին, ինչպես նաև Նախարարների կոմիտեի 2010թ. ուղենիշները երեխային նպաստող արդարադատության մասին և Նախարարների կոմիտեի 2011թ. ուղենիշները երեխային նպաստող առողջապահության մասին,

Վկայակոչելով Խորհրդարանական վեհաժողովի հետևյալ հանձնարարականները՝ 1121 (1990)՝ «Երեխաների իրավունքները», 1501 (2001)՝ «Երեխաների կրթության համար ծնողների և ուսուցիչների պատասխանատվությունը», 1703 (2005)՝ «Ապաստան փնտրող բաժանված երեխաների պաշտպանությունը և օժանդակությունը», 1666 (2004)՝ «Երեխաների մարմնական պատիժների համաեվրոպական արգելքը», 1778 (2007)՝ «Տուժած երեխաներ. բռնության, շահագործման և չարաշահման բոլոր ձևերի ճնշումը», 1864 (2009)՝ «Իրենց վերաբերող որոշումներին երեխաների

մասնակցության խթանումը», 1905 (2010)՝ «Ընտանեկան բռնության ականատես երեխաների» մասին, 1939 (2010) «Ծնողական խնամքից զուրկ երեխաներ. գործողության հրատապ կարիքը» և 1934 (2010)՝ «Հաստատություններում երեխաների նկատմամբ բռնություններ. տուժածների լիակատար պաշտպանության ապահովում»,

Նկատի ունենալով 2010թ. Սոցիալական միասնության նոր ռազմավարությունը և Եվրոպայի Խորհրդի՝ Հանուն սոցիալական միասնության գործողությունների ծրագիրը, որը շեշտում է, որ ընտանիքների և երեխաների բարօրությունը և արտոնությունները վճռորոշ են կյանքի որակի և ապագա վստահություն կառուցելու համար, և կոչ է անում անդամ երկրներին հավաստիանալու, որ մարդկանց խոցելի խմբերին հասանելի են սոցիալական և ֆինանսական ծառայությունները: Նրանք նաև շեշտում են, որ երեխաների և երիտասարդների մասնակցությունը հիմնարար իրավունք է և գլխավոր բաղադրիչ՝ հասարակության ապագայի համար, և որ համապատասխան ծառայությունների կազմակերպումն ու հարմարեցումը պետք է կատարվեն երեխայի իրավունքների համաձայն, և նա պետք է կարողանա մերվել ապահով, բռնությունից զերծ և աջակցող միջավայրին,

Վկայակոչելով 2009թ. հունիսին Վիենայում կայացած՝ Ընտանեկան գործերի համար պատասխանատու՝ Եվրոպայի Նախարարների համաժողովի եզրափակիչ կոմյունիկեն, որը շեշտում էր, որ երեխաներին վերաբերող բոլոր քաղաքականություններն ու որոշումները պետք է հարգեն երեխաների իրավունքներն ու նրա բարձրագույն շահերը,

Հղելով Եվրոպայի խորհրդի՝ «Կառուցել Եվրոպա երեխաների հետ և երեխաների համար» ծրագրի աշխատանքին, երեխայի իրավունքների ծրագրի 2009-2011 թթ. ռազմավարությանը և ապագա՝ 2012-2015 թթ. ծրագրի ռազմավարությանը,

Հաշվի առնելով Սոցիալական միասնության եվրոպական կոմիտեի (ՍՄԵԿ) հովանավորությամբ պատրաստված՝ «Բռնության դեմ անզոր հաշմանդամ մեծահասակների և երեխաների պաշտպանության» մասին 2003թ. զեկույցը, ինչպես և «Եվրոպայում միասնական սոցիալական ծառայությունների» ու «Անհատական սոցիալական ծառայությունների մեջ օգտվողի ներառման» մասին 2007թ. զեկույցները,

Հանձնարարում է, որ անդամ երկրների կառավարությունները

Հաշվի առնեն այս հանձնարարականին կցված ուղենիշները որպես գործնական միջոց՝ երեխաների և ընտանիքների սոցիալական ծառայությունների իրենց համակարգը հարմարեցնելու երեխաների առանձնահատուկ իրավունքներին, շահերին և կարիքներին և գտնելու գործնական լուծումներ սոցիալական ծառայությունների մեջ առկա թերությունների դեմ,

Անդամ երկրներին խրախուսում է, որ նրանք՝

ա. վերանայեն ազգային օրենսդրությունը, քաղաքականությունը և գործունեությունը՝ ապահովելու այս հանձնարարականի կատարման համար անհրաժեշտ բարեփոխումները,

բ. ըստ հնարավորին շուտ ստորագրեն, եթե մինչև օրս չեն արել, երեխաների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի համապատասխան կոնվենցիան,

գ. խթանեն համագործակցությունը երեխաներին ու ընտանիքներին նպաստող սոցիալական ծառայությունների բնագավառում՝ ներառյալ ուսումնասիրության և փորձի փոխանակման բնագավառները՝ թե՛ ներպետական, թե՛ միջազգային առումով,

դ. ապահովեն համագործակցություն տարբեր երկրների սոցիալական ծառայությունների միջև առանձին դեպքերում, երբ երեխաները վտանգված են կամ տեղափոխվում են երկրից երկիր,

ե. տարածեն այս հանձնարարականի բովանդակությունը երեխաներին հարմար լեզվով ու ձևերով,

զ. երկխոսություն հաստատեն շահագրգիռ կողմերի, ինչպես նաև հանրության հետ՝ արդյունքների և երեխային ու ընտանիքին նպաստող սոցիալական ծառայություններից ընդհանուր գոհունակության մասին:

Կոչ է անում անդամ երկրներին ապահովելու, որ հանձնարարականը լայնորեն տարածվի երեխաների իրավունքների համար պատասխանատու կամ այլ ձևով սոցիալական ծառայություններում դրան առնչվող բոլոր իշխանությունների, երեխաների ու ընտանիքների շահերը ներկայացնող՝ ծառայություններ մատուցող խմբերի և շահագրգիռ այլ անձանց մեջ:

Հավելված CM/Rec (2011)12 Հանձնարարականի

Ուղենիշներ

I. Ընդգրկումը և նպատակը

1. Հանձնարարականը ուղղված է երեխաների իրավունքներին՝ սոցիալական ծառայությունների պլանավորման, մատուցման և գնահատման մեջ, որոնք պետք է հարմարեցված լինեն նրանց և նրանց ընտանիքների կարիքներին: Այն հիմնված է երեխայի բարձրագույն շահերի, ինչպես և նախապատրաստման, մասնակցության և պաշտպանվածության՝ երեխայի իրավունքի սկզբունքի վրա:
2. Հանձնարարականը վերաբերում է բոլոր երեխաներին առանց խտրականության, երբ նրանք առնչվում են սոցիալական ծառայությունների հետ որևէ իրադրության, ունակության կամ որևէ այլ պատճառով, ինչպես նաև սոցիալական ծառայությունների բոլոր որոշումների առնչությամբ, երբ դրանք կարող են ուղղակի կամ անուղղակի ազդել նրանց կյանքի վրա:
3. Հանձնարարականը նպատակ ունի ապահովելու, որ սոցիալական ծառայությունները մատուցվեն երեխաների կարիքների և հանգամանքների անհատական գնահատման հիման վրա, և հաշվի առնվի երեխայի սեփական կարծիքը՝ նրա տարիքին, մակարդակին և ունակություններին համապատասխան:

II. Սահմանումներ

Երեխաների իրավունքներին և երեխային ու ընտանիքին նպաստող սոցիալական ծառայություններին վերաբերող այս հանձնարարականի (այսուհետ՝ հանձնարարական) նպատակների համաձայն՝

1. «երեխա» է համարվում մինչև 18 տարեկան յուրաքանչյուր անձ,
2. «ծնող» է (են) համարվում ազգային օրենսդրության համաձայն ծնողական պատասխանատվություն ունեցող անձը (անձինք): Այն դեպքերում, երբ ծնողը կամ ծնողները բացակայում են կամ այլևս ծնողական պատասխանատվություն չունեն, դա կարող է լինել խնամակալը, նշանակված օրինական ներկայացուցիչը կամ երեխայի անմիջական խնամողը,
3. «սոցիալական ծառայություն» տերմինը վերաբերում է սոցիալական կարիքներին ուղղված բոլոր կարգի ծառայություններին, ինչպես և անձնական սոցիալական ծառայություններին, որոնք մատուցվում են հանրային կամ մասնավոր մարմինների կողմից: Եթե

առաջինները վերաբերում են ստանդարտացված, համընդհանուր ծառայություններին, որոնք մատուցվում են որոշակի կատեգորիայի մարդկանց, ապա վերջինները «ըստ կարիքի» են և ուղղված են առանձնահատուկ կարիք ունեցող նպաստառուներին։

4. «երեխաների և ընտանիքների համար սոցիալական ծառայություններ» տերմինը վերաբերում է միջոցառումների և գործողությունների ցանցին՝ ուղղված երեխայի և/կամ ընտանիքի ընդհանուր կամ անհատական կարիքներին։ Դրանք նախատեսված են բավարարելու երեխայի և ընտանիքի բազմազան կարիքները՝ որպես տարբեր մակարդակներով մատուցվող ընդհանուր, հատուկ և խորացված սոցիալական ծառայություններ,
5. «երեխային նպաստող սոցիալական ծառայություններ» տերմինը վերաբերում է այն սոցիալական ծառայություններին, որոնք հարգում, պաշտպանում և իրագործում են յուրաքանչյուր երեխայի իրավունքները, ներառյալ նախատեսման, մասնակցության և պաշտպանվածության իրավունքը և երեխայի բարձրագույն շահերի սկզբունքը։

III. Հիմնարար սկզբունքներ

Հանձնարարականը հիմնվում է գոյություն ունեցող սկզբունքների վրա, որոնք ամրագրված են նախաբանում վկայակոչված փաստաթղթերում։ Այդ սկզբունքները զարգացվել են հետևյալ բաժիններում և պետք է վերաբերեն այս հանձնարարականի բոլոր գլուխներին։

Ա. Դրույթներ հոգուտ երեխայի բարձրագույն շահերի

1. Երեխաների և ընտանիքների համար սոցիալական ծառայությունները պետք է բացահայտ նպատակ դնեն, որ հիմնական մտահոգությունը լինի երեխաների բարձրագույն շահը։
2. Նկատի ունենալով, որ ծնողներն ունեն առաջնային պատասխանատվություն երեխայի դաստիարակության և զարգացման համար, սոցիալական ծառայությունների մատուցումը պետք է ապահովի աջակցող միջավայր երեխայի համար՝ տրամադրելով ծառայությունների և ռեսուրսների համապատասխան մակարդակ ու բազմազանություն, որոնք անհրաժեշտ են արդյունավետ խնամքի և խնամակալական հմտությունները զարգացնելու համար։
3. Երեխաների և ընտանիքների համար սոցիալական ծառայությունները պետք է նպատակադրեն երեխայի ներունակ հնարավորությունների լիակատար զարգացումը և գիտակցեն, որ երեխան կարիք ունի խնամքի, ճանաչման, կատարելագործման և համակարգված դաստիարակության։ Սոցիալական ծառայությունները պետք է ապահովեն երեխաների և ընտանիքների հետ հաղորդակցվելու պատշաճ պատասխանատվություն և որակ՝ ներառյալ՝

   ա. երեխայի և նրա ընտանիքի արժանապատվության հարգանքը, որն ապահովում է երեխաների նկատմամբ հոգատար, զգայուն, անաչառ և հարգալից վերաբերմունք,

   բ. պաշտպանությունը ամեն կարգի խտրականության դեմ՝ սեռային, տարիքային, հաշմության, սոցիալական, տնտեսական կամ էթնիկական ծագման, ռասայի, մաշկի գույնի, ծնունդի, ունեցվածքի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ կարծիքի, սեռական կողմնորոշման կամ այլ կարգավիճակի հիմքի վրա,

   գ. սոցիալական ներգրավումը՝ ապահովելու հավասարություն, հավասար հնարավորություններ և դրական արդյունքներ բոլոր երեխաների համար, ներառյալ խոցելի խմբերի երեխաներին,

դ. սոցիալական կանխակալություն հետևանքով երեխաների որոշ խմբերի նկատմամբ առաջացած քամահրանքի հաղթահարումը՝ սատարելով սեփական դրական կերպարն ու ինքնահարգումը,

ե. ծառայություններից կախվածության հաղթահարումը՝ քաջալերելով երեխաների և ընտանիքների ինքնավարությունն ու գործունությունը։

Բ. Երեխաների մասնակցության իրավունքը

1. Սոցիալական ծառայությունները իրենց աշխատանքում պետք է ապահովեն, որ երեխաներին լսեն և լուրջ ընդունեն։ Սոցիալական ծառայությունների պլանավորման, մատուցման և գնահատման ժամանակ երեխաներին պետք է հաշվի առնել և վերաբերվել որպես լիիրավ անձանց, որպես ակտիվ սուբյեկտների։ Երեխաներին պետք է հնարավորություն տալ իրականացնելու իրենց իրավունքները իրենց կարողությունների համաձայն՝ ըստ պատշաճի հաշվի առնելով նրանց տարիքը, զարգացածությունը և անհատական հանգամանքները։ Այս նպատակի համար պետք է նախատեսել ավելի կամ պակաս պաշտոնական միջոցառումներ, արարողակարգեր ու ընթացակարգեր։
2. Մասնակցությունը պետք է հասկանալ ոչ միայն երեխաների ունակությունների զարգացման, ապագայի դրական արդյունքների առումով, այլև ներկայումս երեխայի կյանքի որակի տեսակետից։ Հետևաբար, երեխաները պետք է դիտվեն այնպիսիք, ինչպիսիք կան այսօր և ոչ թե միայն որպես «կազմավորվող» արարածներ։
3. Մասնակցությունը երեխաներին ու ընտանիքներին մատուցվող սոցիալական ծառայություններին կարող է լինել տարբեր մակարդակներով՝ ինչպես անհատապես, այնպես էլ խմբով.

ա. խորհրդակցական մասնակցություն, որն ընդունում է, որ երեխաներն ունեն փորձառություն և հեռանկարներ, որոնք պետք է իմացվեն և ազդեն հասուն որոշումներ կայացնելու վրա.
բ. համագործակցական մասնակցություն, որը երեխաներին հնարավորություն է տալիս ակտիվորեն ներգրավվել որոշում կայացնելու բոլոր փուլերի, նախաձեռնությունների, ծրագրերի և ծառայությունների մեջ.
գ. երեխաների վարած մասնակցություն, որը նպաստում է երեխաների նախաձեռնություններին և իրենց սեփական շահերի պաշտպանությանը՝ նրանց կարիքները հոգալու համար ստեղծված տարբեր գործողությունների և ծառայությունների առնչությամբ։

4. այն բոլոր գործընթացներում, որտեղ սոցիալական ծառայություններ են մատուցվում երեխաներին, նրանք պետք է իրավունք ունենան՝

ա. երեխաներին մատչելի ձևով տեղեկացված լինելու սոցիալական ծառայություններ ստանալու իրենց իրավունքների, հասանելի ծառայությունների, ինչպես նաև այլընտրանքային գործելակերպի դեպքում հնարավոր հետևանքների մասին.
բ. ստանալու իրենց վիճակի մասին ամբողջ կարևոր տեղեկատվությունը.
գ. աջակցություն ստանալու իրենց կարծիքն արտահայտելիս.
դ. լսված լինելու,
ե. որոշում կայացնելու գործընթացում իրենց կարծիքները հաշվի առնված լինելու՝ իրենց տարիքի և հասունության մակարդակի համաձայն,
զ. տեղեկացված լինելու ընդունված որոշումների և այն մասին, թե որքանով են հաշվի առնվել իրենց կարծիքները։
5. Լսված լինելու իրավունքը երեխայի իրավունքն է և ոչ թե պարտականություն նրա համար։

6. Գործընկերությունը ծնողների հետ և ծնողների ներգրավումը երեխաներին ու ընտանիքներին անհատական սոցիալական ծառայություններ մատուցելու մեջ պետք է ապահովվի առանց նվազեցնելու լսված լինելու և լուրջ ընդունվելու՝ երեխայի իրավունքը:

Գ. Երեխաների պաշտպանվածության իրավունքը

1. Սոցիալական ծառայությունները երեխաների և ընտանիքների համար պետք է ապահովեն երեխաների պաշտպանվածությունը ամեն տեսակի արհամարանքից, վիրավորանքից, բռնությունից, շահագործումից՝ կանխարգելող միջոցառումներով, ինչպես և համապատասխան և արդյունավետ միջամտությամբ: Դրանք պետք է նպատակ ունենան պահպանելու ընտանիքի ուժն ու միասնությունը, հատկապես դժվարություններ կրող ընտանիքներում:
2. Երեխաների վիրավորանքի և արհամարհանքի իրավիճակները պահանջում են սատարող և համապարփակ ծառայություններ՝ երեխային ընտանիքից բաժանելուց խուսափելու նպատակով: Ընտանիքի միասնության սատարումը, սակայն, չպետք է դառնա ինքնաբավ նպատակ: Հանուն երեխայի շահերի և նրա պաշտպանության նրան ընտանիքից դուրս տեղավորելը երբեմն անհրաժեշտ է: Հատկապես, երբ ծնողները ներքաշված են սեռական բռնության կամ երեխայի շահագործման մեջ, միջամտական գործընթացները պետք է կասկածյալ իրավախախտին ընտանեկան տնից հեռացնելու հնարավորություն ներառեն:
3. Տնից դուրս տեղավորելու որոշումը պետք է կատարվի միայն երեխայի բարձրագույն շահերից ելնելով: Խնամքի ընտրությունը պետք է համապատասխան լինի երեխայի ներկա և ապագա կարիքներին:
4. Երեխաներին ու ընտանիքներին սոցիալական ծառայությունների մատուցումը խոցելի երեխաներին պաշտպանելու համար, ի թիվս այլոց, պետք է հավատարիմ մնա հետևյալ սկզբունքներին՝

ա. կանխարգելում և վաղ միջամտություն,
բ. երեխայակենտրոն ընկերակցություն ծնողների հետ,
գ. երեխայի անհատական կարիքների ուշադիր գնահատում՝ հաշվի առնելով պաշտպանվելի գործոնները (ներառյալ ուժը), ինչպես նաև ռիսկային գործոնները երեխայի սոցիալական շրջապատում
դ. երեխային կրկին բռնության ենթարկելու կանխարգելում:

IV. Երեխաներին նպաստող սոցիալական ծառայությունների գլխավոր տարրերը

Ա. Ընդհանուր սոցիալական ծառայություններ

Ընդհանուր սոցիալական ծառայությունները երեխաների և ընտանիքների համար պետք է կազմակերպվեն լրացուցչության հիման վրա և առաջարկեն մի շարք կանխարգելիչ, համապարփակ և արձագանքող ծառայություններ՝ հատուկ ուշադրություն դարձնելով իրենց իրավունքներից զրկված երեխաներին և առավելագույն կարիքի մեջ գտնվող ընտանիքներին: Դա, ի թիվս այլոց, ներառում է՝

ա. երեխաների համար որակյալ խորհրդի/խորհրդատվության մատչելիության երաշխավորում, կրթական ցերեկային խնամք, վերականգնողական և մշակութային գործունեություն և այլն՝ հատկապես նկատի առնելով աշխատանքի շուկայում ծնողի կամ ծնողների վիճակը (մասնակցություն կամ բացառում),
բ. աղքատության պայմաններում երեխաների և ընտանիքների հիմնական կարիքների բավարարում, ինչպես՝ ֆինանսական օգնություն, կացարանի լրահատկացում և բուժօգնության ու կրթության մատչելիություն բոլոր երեխաների համար,

գ. օժանդակության համակարգեր խոցելի պայմաններում գտնվող երեխաների, օրինակ՝ տարաբնակ երեխաների, թրաֆիկինգի զոհ դարձած երեխաների, մտավոր առողջության խնդիրներ ունեցող երեխաների, ծնողական խնամքից զուրկ երեխաների, ազատազրկված կամ այլ իրավունքներից զրկված ծնողների երեխաների համար,
դ. ընդհանուր նախատեսումներ ընտանեկան խորհրդատվության և ծնողական հմտությունների խորացման համար,
ե. միասնական մոտեցումներ և արդյունավետ վաղ միջամտություն երեխաների նկատմամբ անփութության և դաժան վերաբերմունքի դեպքերում, ներառյալ յուրաքանչյուր երեխայի համար համապատասխան օժանդակության անհատական պլանի մշակումը,
զ. որ ծառայությունները բավարարեն առանձնահատուկ կարիքները կամ անլիարժեքություն ունեցող երեխաներին ու նրանց ընտանիքներին՝ ինքնուրույն ապրելու և առօրյա կյանքին լիարժեք մասնակցելու համար,
է. իրականացնել արդյունավետ կանխարգելիչ ծրագրեր հանցավորության, ալկոհոլի և թմրանյութի չարաշահման և այլ վտանգալից վարքագծի դեմ, ինչպես նաև միջոցառումներ՝ երեխայի սոցիալական շրջապատում թունավոր տարրերի հաղթահարման համար:

Բ. Հատուկ սոցիալական ծառայություններ

Հատուկ սոցիալական ծառայությունները պետք է պատրաստ լինեն ապահովելու անհապաղ արտակարգ միջամտություն, միջոցներ ձեռք առնեն մանկության անբարենպաստ կենսափորձի բացասական ազդեցության դեմ և սոցիալական ու հոգեբանական օժանդակություն տրամադրեն երեխաներին ու նրանց ընտանիքներին: Այդ բազմակողմանի ծառայությունները և/կամ ծրագրերը պետք է հիմնված լինեն երեխաների անհատական կարիքների գնահատման և, գերադասելի է, փաստերով հիմնավորված միջամտության վրա: Դրանք, ի թիվս այլոց, ընդգրկում են ծառայություններ երեխաների և նրանց ընտանիքների համար, ուշադրության առնելով՝

ա. ֆիզիկական կամ հոգեկան բռնության, վիրավորանքի և անփութության զոհերին, ներառյալ այն դեպքերը, երբ երեխաներն ականատես են լինում ընտանեկան կամ այլ կարգի բռնության,
բ. սեռական բռնության և շահագործման զոհերին,
գ. ծնողական հմտությունների վարժեցման հատուկ կարիք ունեցող ծնողներին, ասենք՝ բռնակալական կամ անբավարար ծնողական վարքագծի պատճառով,
դ. իմացական, հաղորդակցական, ֆիզիկական կամ այլ թերություններ ունեցող երեխաներին,
ե. վարքագծի և հուզական դժվարություններ՝ ներառյալ հակահասարակական վարքագիծ (օրինակ՝ ագրեսիա, անհամապատասխան սեռական հակում), ալկոհոլի և թմրանյութի չարաշահում և մտավոր խանգարումներ ունեցող երեխաներին:

Գ. Խորացված սոցիալական ծառայություններ

Երբ հնարավոր չէ խուսափել այլընտրանքային խնամքից, անհատական որոշումներ ընդունելիս վճռորոշ գործոն պետք է լինի ճշգրիտ գնահատմամբ սահմանված՝ երեխայի կարիքներին համապատասխանության սկզբունքը[1]: Խորացված սոցիալական ծառայությունները պետք է հիմնվեն հետևյալ սկզբունքների վրա՝

ա. պետք է հաստատվեն խնամքի որակի չափորոշիչներ, այդ թվում՝ երեխայի իրավունքների կանոնների վերաբերյալ,

[1] Միավորված ազգերի Ուղենիշները երեխաների այլընտրանքային խնամքի վերաբերյալ. Հանձնարարական A/64/142, 2009:

բ. այլընտրանքային խնամքի տակ գտնվող երեխաների վիճակը պետք է պարբերաբար վերանայվի՝ հետխնամատարության ապահովումով երեխային ընտանիքին և հասարակությանը վերադարձնելու նպատակով.
գ. պետք է մշակվեն փակ հաստատություններից դուրս բերելու ծրագրեր՝ զուգակցված ընտանեկան և համայնքային խնամատար ծառայությունների ջանքերին, հատկապես 3 տարեկանից փոքր և հաշմանդամություն ունեցող երեխաների համար,
դ. կարճատև խորացված ծառայությունները, օրինակ՝ փակ հաստատությունում տեղավորելը լուրջ, ախտորոշիչ/գնահատողական կամ կարճատև խնամքի նպատակով, պետք է մատչելի լինեն՝ որպես ընտանիքին նպաստող միջոցառումներ,
ե. պետք է մշակվեն օրենքի հետ բախման մեջ գտնվող երեխաների ազատազրկմանը փոխարինող այլընտրանքային պայմաններ։

V. Երեխաներին նպաստող սոցիալական ծառայությունների հիմնական ռազմավարությունները

Ա. Տեղեկատվություն և խորհուրդ

1. Սոցիալական ծառայությունների իրավունքների և մատչելիության մասին տեղեկատվության տարածումը պետք է լինի թափանցիկ և երեխաներին մատչելի լեզվով, արտացոլի բոլոր տարիքների և զարգացման տարբեր աստիճանի երեխաների կարիքները։ Իրազեկումը բարձրացնող քարոզարշավի, ինչպես և սատարող ու տեղեկատվական ծառայությունների միջոցով, օրինակ, պետք է մշակվի օժանդակություն՝ հատկապես ուղղված խոցելի երեխաներին և ընտանիքներին։ Պետք է լինեն երեխաների իրավունքների մասին ծնողների լավատեղյակությունը բարձրացնելուն աջակցող համակարգեր։

2. Սոցիալական ծառայությունների համակարգի հետ իրենց առաջին առնչությունից սկսած՝ երեխաներն ու ընտանիքները պետք է ճշգրիտ և համարժեքորեն տեղեկացվեն և խորհուրդ ստանան, այդ թվում՝

ա. ծառայություններ ստանալու նրանց իրավունքի՝ ներառյալ այդ իրավունքների հնարավոր խախտումները շտկելու համար հասանելի միջոցների մասին,
բ. հասանելի ծառայությունների սահմանի և դրանց մատուցման ընթացակարգի մասին,
գ. ընթացակարգային տարբեր քայլերում երեխայի ունեցած դերի և անձանց մասին, որոնք կարող են ուղեկցել կամ աջակցել երեխային՝ սոցիալական ծառայությունների հետ գործ ունենալիս։

Բ. Ծառայությունների մատչելիությունը

Որպես սոցիալական իրավունքներ ունեցողների՝ երեխաներին հավասարապես մատչելի պետք է լինեն սոցիալական ծառայությունները։ Սա ենթադրում է, որ պետք է միջոցներ ձեռք առնվեն, ի թիվս այլոց, ապահովելու համար՝

ա. երեխային նպաստող հարմարություն և տարբեր մատակարարների սոցիալական ծառայություններից օգտվելու մեկ կետ,
բ. երեխայակենտրոն և մշակութազգայուն մոտեցում, որը սատարում է իմաստալից երկխոսությանը երեխաների և ընտանիքների հետ,
գ. արագ պատասխան երեխաներին և նրանց ընտանիքներին պատահած ամեն մի խնդրի՝ հատկապես արտակարգ իրավիճակներում,
դ. բաց լինելու ժամերի ճկունություն և աշխարհագրական մատչելիություն կարիքավորների օգնության ծառայությունների ցանցում,
ե. տարբեր իրավիճակներին հարմարեցված՝ տարբեր ինֆորմացիոն տեխնոլոգիաների թարգմանություն, մեկնաբանում և կիրառում,

զ. ֆիզիկական, զգացական կամ մտավոր արատներ, ինչպես և հոգեկան խանգարումներ ունեցող անձանց հատուկ կարիքներին համապատասխան սոցիալական ծառայությունների գրասենյակների նախագծում և կազմակերպում,
է. վճարովի ծառայությունների մատչելիություն:

Գ. Հասանելիություն

Տարբեր մակարդակներում երեխաներին և ընտանիքներին սոցիալական ծառայությունների հասանելությունը հիմնական տարր է երեխաների և նրանց ծնողների բազմազան կարիքները հոգալու համար՝ նրանց կյանքի տարբեր փուլերում և իրավիճակներում: Սոցիալական ծառայությունների պլանավորման և մատուցման առնչությամբ դա պահանջում է, ի թիվս այլոց, հետևյալ բաղադրիչները՝

ա. որ սոցիալական ծառայությունները մատուցվեն ընդհանուր, առանձնահատուկ և խորացված ծառայությունների կարիքի ուշադիր գնահատման համաձայն և համապատասխանեն դրանց համար նշված նպատակներին,
բ. որ իրականացվեն ծառայությունների աստիճանի, ծավալի և նպատակների պարբերական ստուգումներ՝ ապահովելու համար ճկունություն և զգայունություն՝ փոփոխվող կարիքների հանդեպ և աշխատանքային գործունեության զարգացում,
գ. որ բավարար չափով ֆինանսական, ենթակառուցվածքային և մարդկային ներդրումներ ապահովվեն՝ դրված նպատակներին հասնելու համար:

Դ. Համապատասխանություն, հարմարություն

1. Սոցիալական ծառայությունները պետք է մատուցվեն ժամանակին՝ տվյալ պահին յուրաքանչյուր երեխայի և յուրաքանչյուր ընտանիքի կարիքներին համապատասխան լինելու հիմքի վրա՝ նկատի ունենալով երեխայի ապագան: Սա պետք է ներառի երեխաների մյուս իրավունքների հարգանքը, պահպանումն ու պաշտպանությունը՝ սկսած առողջապահության, կրթության, հանգստի, մշակույթի, սպորտի և ժամանցի մատչելիությունից մինչև մասնակցության ու պաշտպանվածության իրավունքը:

2. Ծառայությունների հարմարությունը պետք է հիմնված լինի ծառայությունների պլանավորման և անհատական կարիքներին համապատասխանեցնելու վրա՝ ներառյալ երեխայի համար արդյունքների գնահատումը և, ըստ հարմարության, արձագանքների դիտարկումը:

Ե. Միջճյուղային և բազմամասնակցական գործակցություն

1. Բարդ և բազմազան կարիքներ ունեցող երեխաներն ու ընտանիքները պետք է օժանդակվեն համագործակցող մասնագետների կողմից՝ տարբեր հատվածների միջև համակարգված ծառայություններով՝ ներառյալ կրթությունը, առողջապահությունն ու սոցիալական ծառայությունները և օրենքի կատարումն ապահովող մարմինները: Յուրաքանչյուր ծառայության իրավասություններն ու պատասխանատվությունները պետք է տեսանելի լինեն և պարզաբանվեն նպաստառուներին: Պետք է ուշադրության առնել աջակցության կարիքը (դատական գործի վարում):

2. Պետք է հաստատվեն ընդհանուր գնահատման շրջանակներ և ներգրավման վարքականոններ երեխաների, հատկապես վտանգված երեխաների հետ կամ նրանց համար աշխատող տարբեր մասնագետների և գործակալությունների համար: Միջճյուղային մոտեցում իրականացնելիս պետք է հարգվեն գաղտնիության մասնագիտական կանոնները:

3. Սոցիալական ծառայությունները պետք է հեշտացնեն երեխաներին նպաստող բազմահատվածական և միջճյուղային ծառայությունների հասանելիությունը բռնությունների զոհ կամ ականատես դարձած երեխաների համար՝ կրկնվող դեպքերից կամ երեխաների կրկին տուժելուց խուսափելու նպատակով:

Զ. Մասնագիտական հմտություն. վարժեցում, վերահսկում և պատասխանատվություն

1. Երեխաների հետ կամ նրանց համար աշխատող անձնակազմերի բոլոր անդամները պետք է ունենան համարժեք մասնագիտական պատրաստվածություն, ինչպես նաև ընթացիկ վերապատրաստում երեխաների իրավունքների գծով: Պետք է ապահովել վերապատրաստումը մարդու իրավունքների փաստաթղթերի գծով (Միավորված ազգերի կոնվենցիաները Երեխայի իրավունքների և Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին)՝ սոցիալական ծառայություններում երեխաների իրավունքների շուրջը բարեկիրթ մթնոլորտ հաստատելու և պահպանելու նպատակով:

2. Բոլոր մասնագետները պետք է վարժեցվեն երեխաների նկատմամբ տեղի ունեցած բռնության և անփութության նշանների ճանաչման և վկայակոչման ու զեկուցման համապատասխան մեխանիզմների գործադրման ուղղությամբ:

3. Մասնագետները պետք է պատրաստություն ստանան երեխաների և ընտանիքների հետ աշխատելու մասնակցական մեթոդների կիրառման ուղղությամբ՝ ապահովելու համար, որ նրանք լսվեն և լուրջ ընդունվեն: Սա ներառում է տարբեր տարիքի և զարգացման աստիճանի երեխաների, ինչպես և հատուկ խոցելիության վիճակում գտնվող երեխաների հետ հաղորդակցվելու վարժեցում: Երեխաների հետ անմիջաբար աշխատողների անձնակազմը պետք է ունակ լինի նրանց հետ ստեղծելու և պահպանելու փոխադարձ հարգանքի, գաղտնապահության ու բարեկամության վրա հիմնված վստահության հարաբերություններ:

4. Մասնագետների պատրաստումը պետք է ներառի մասնագիտական պատասխանատվություն, հաշվետվականություն և տարբեր մասնագիտությունների միջև միջառարկայական համագործակցություն՝ հմտությունների ու լավագույն փորձի փոխանակման միջոցով:

5. Մասնագիտական հաշվետվականությունը պետք է ապահովվի հստակ սահմանված լիազորագրերով, աշխատակարգով և բարոյական կանոններով: Մասնագետները պետք է ունենան բավարար միջոցներ և օգնություն անհատական և/կամ խմբական վերահսկումից՝ իրենց հմտությունը և սատարումը բարձրացնելու համար:

Է. Երեխայի անվտանգությունը

Սոցիալական ծառայությունների մատուցման ողջ ընթացքում առաջին մտահոգությունը պետք է լինի երեխայի անվտանգությունը: Երեխաները պետք է վնասից պաշտպանված լինեն արդյունավետ և արագ միջամտությամբ վտանգալից իրադրություններում՝ ապահովելու համար բացառումը կրկին զոհի դերում հայտնվելուց: Այս նպատակով պետք է սահմանվի սոցիալական ծառայություններին կամ այլ համապատասխան գործակալություններին ուղղված պարտադիր զեկույցների համակարգ: Երեխաների պաշտպանության հետագա միջոցառումները, ի թիվս այլոց, ներառում են՝

ա. երեխաների հետ և նրանց համար աշխատող մասնագետները պետք է ենթակա լինեն վերահսկման՝ ըստ անհրաժեշտության ներառելով պարբերական և համապարփակ գնահատումը.

բ. անձնակազմի համալրման ընթացակարգը պետք է ներառի քննում ազգային օրենսդրության համաձայն՝ ապահովելու համար անձնակազմի համապատասխանությունը երեխաների հետ աշխատելուն, օրինակ՝ քրեական հաշվառման ստուգմամբ.

գ. սոցիալական ծառայությունների պայմանները պետք է ապահով լինեն հարմարությունների, սարքավորումների վիճակի և ֆիզիկական ու սոցիալական միջավայրի այլ կողմերի առումով:

Ը. Գաղտնիության և մասնավոր կյանքի իրավունքներ

Սոցիալական ծառայություններ ստացող կամ ստացած երեխաների մասնավոր կյանքը և անձնական տվյալները պետք է պաշտպանված լինեն ազգային օրենսդրության համաձայն: Ոչ մի տեղեկատվություն կամ անձնական տվյալ չպետք է հասանելի լինի կամ հրապարակվի, հատկապես լրատվամիջոցներով, որը կարող է հայտնաբերել կամ անուղղակիորեն բացահայտել երեխայի և նրա ընտանիքի ինքնությունը: Սա, ի թիվս այլոց, ներառում է, որ՝

ա. լրատվամիջոցների կողմից մասնավոր կյանքի իրավունքի խախտման կանխարգելումը պետք է երաշխավորվի օրենսդրական միջոցներով կամ լրատվամիջոցների ինքնակարգավորման վերահսկման միջոցով,

բ. երեխաներին վերաբերող անձնական կամ գաղտնի տվյալներ պարունակող բոլոր գրառումների ու փաստաթղթերի հասանելիությունը պետք է սահմանափակվի և վերապահվի օրենքով: Եթե անձնական կամ գաղտնի տվյալների փոխանցումն անհրաժեշտ է երեխայի շահերից ելնելով, դա պետք է կարգավորվի տվյալների պաշտպանության համապատասխան օրենսդրությամբ,

գ. երեխաների հետ և նրանց համար աշխատող մասնագետները պետք է հետևեն գաղտնիության խիստ կանոններին, բացի այն դեպքերից, երբ առկա է երեխային վնասելու վտանգ,

դ. գաղտնիության կանոնները պետք է հեշտացնեն միջճյուղային համագործակցությունը՝ հիմնելով մասնավոր կյանքը հարգելու ընդհանուր շրջանակ: Սա հանգեցնում է տեղեկատվության փոխանակման թույլտվությանը մասնագիտական գաղտնիությամբ կապված անձանց միջև և միայն այն դեպքում, երբ դա բխում է երեխայի շահերից: Տեղեկատվության փոխանակումը պետք է սահմանափակվի այդ նպատակին հասնելու համար խիստ անհրաժեշտ բաներով և ընդհանուր առմամբ պետք է ենթակա լինի երեխայի և նրա ծնողների հավանությանը:

Թ. Բողոքարկման մեխանիզմներ և երեխային վնասող որոշումների վերանայում

Երեխայի կամ նրա ծնողների կողմից որոշումների կամ պահանջների արդյունքների բողոքարկման դեպքում պետք է առկա լինեն դրանց վերաքննման մեխանիզմներ: Պետք է հաստատվի անկախ և անկողմնակալ մարմնին ներկայացվող բողոքարկման հստակ ընթացակարգ՝ ներառյալ երեխայի կողմից բողոքարկման իրավունքի իրականացնումը դյուրացնող միջոցները: Հատուկ ջանքեր պետք է գործ դրվեն ընթացակարգի վերաբերյալ տեղեկատվության տարածման ուղղությամբ՝ ապահովելու համար, որ երեխաներն ու ընտանիքները իրազեկ լինեն բողոքարկման և որոշումները վերանայելու իրավունքին:

Ժ. Որակական չափորոշիչներ, մշտադիտում և գնահատում

Պետք է հաստատվեն սոցիալական ծառայությունների քաղաքականությունն ու գործունեությունը արտացոլող որակական չափորոշիչներ՝ ապահովելու համար այս հանձնարարականի իրագործումը: Երեխաներին և ընտանիքներին բոլոր ծառայություն մատակարարողները պետք է հավատարմագրվեն և գրանցվեն իրավասու իշխանությունների կողմից՝ ազգային օրենսդրության և կանոնակարգերի հիմքի վրա: Դրա վրա հիմնված՝ պետք է իրականացվի արդյունավետ մշտադիտարկման և գնահատման համակարգ: Այն պետք է ընդգրկի հետևյալը՝

ա. սոցիալական ծառայությունների պարբերական ներքին գնահատում՝ հիմնված խիստ և թափանցիկ կանոնների և չափանիշների վրա.

բ. անկախ արտաքին գնահատում՝ ներառյալ երեխաների և ծնողների ներգրավումը սոցիալական ծառայությունների գնահատման գործընթացի մեջ և հայտնաբերումների հրապարակային հասանելիությունը.

գ. ապահովելու համար, որ քաղաքացիական հասարակությունը, մասնավորապես, այն կազմակերպությունները, հաստատություններն ու մարմինները, որոնք նպատակ ունեն առաջ մղելու և պաշտպանելու երեխայի իրավունքները, կարողանան լիակատար մասնակցել մշտադիտարկման գործընթացին։

Երեխաների իրավունքները և երեխաներին ու ընտանիքներին նպաստող սոցիալական ծառայությունները
Նկարազարդումները՝ Գաբրիել Պագոնիս – © Եվրոպայի խորհուրդ

Եվրոպայի խորհուրդը
Եվրոպայի խորհուրդը 1949թ. հիմնադրված միջազգային կազմակերպություն է, որն այսօր ունի 47 անդամ երկրներ: Նրա դերն է առաջ մղել մարդու իրավունքները, ժողովրդավարությունը և օրենքի տիրապետությունը: Նա հաստատում է ընդհանուր ժողովրդավարական սկզբունքներ՝ հիմնված Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի և այլ կոնվենցիաների ու հանձնարարականների վրա՝ նվիրված մարդկանց պաշտպանությանը, որը, անշուշտ, ընդգրկում է Եվրոպայի 150 միլիոն երեխաներին:

«Կառուցել Եվրոպա երեխաների հետ և երեխաների համար»
Եվրոպայի խորհուրդ
F-67075 Strasbourg Cedex
www.coe.int/children
children@coe.int